

Ընդհանուր տեղեկություններ

Նախագիծը մշակված է **Ներքին թաղարի** Բժշկական համալսարանի սպորտդահլիճի ներքին էլեկտրականության ցանցերի մոնտաժային աշխատանքների համար՝ համաձայն ճարտարապետա-շինարարական լուծումների, բոլոր տեխնիկական առաջադրանքների, պատվիրատուի կողմից տրված առաջադրանքների, և էլեկտրոտեխնիկական կանոնակարգի, NEC (National Electrical Code), СП 31-110-2007 СНИП 67-78-ի հիման վրա:

Նախագծում ընգրկված են՝

1. Ընդհանուր տեղեկությունները:
2. Օգտագործված պայմանական նշանների ցանկը:
3. էլ. վարդակների, լուսատուների միացման սխեմաները:
4. Օգտագործվող էլ. նյութերի մասնագիրը:

Ելնելով էլեկտրական բեռնվածքի հաշվարկի համար տրված տվյալներից՝ սնուցող էլ.վահանակների դրվածքային հզորությունը հեռանկարում կկազմի եռաֆազ 6 կՎտ: էլեկտրաէներգիայի բաշխումը կատարվում է խմբային էլ. վահանակների (LP) արկղերից, խմբային էլ. վահանակի մեջ տեղադրվում են միաբևեռ, եռաբևեռ ավտոմատ անջատիչները, իողանցման և զրոյական կոնտուրները:

Խմբային ցանցերը կառուցվում են պղնձե բազմաջիղ մալուխներով և հաղորդալարերով : Ներքին վարդակային ցանցերը կառուցել 3x2.5մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. մալուխների միջոցով:

Ներքին լուսավորության ցանցերը կառուցել 3x1.5մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. հաղորդալարերի միջոցով:
Լ սպորտդահլիճի **սնուց** մալուխը **անցկացնել** **հարկում** **գտնվող** **բաշխիչ վահանից**

Վարդակները տեղադրել հատակից 1500մմ, անջատիչները տեղադրել հատակից 850մմ բարձրության վրա:

Խմբային էլ. վահանակը տեղադրել հատակից 1500մմ բարձրության վրա:

Որպես պաշտպանիչ միջոցներ հարկավոր է միացնել գործող հեղանցման ցանցին: